14403

2849

2843

158

# ՀԱՇՒԵՏՈՒԹԻՒՆ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

# „Խ Ր Ի Մ Ե Ա Ն"

ԾՂԱՑՈՑ ԴՊՐՈՑԻ

## 1907—1908

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՒԱՑ

~~2563~~

Տպարան „ՇԻՐԱԿ" Ալէքսանդրապօլ

1 9 0 8

(68)

14403

# ՀԱՇՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ «ԽՐԻՄԵԱՆ» ՏՂԱՑՈՑ ԴՊՐԱՑԻ 1907—1908 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՒԱՅ

1907—1908 ուսումնական տարում Ս. Լուսաւորչի «Խրիմեան» դպրոցի նախկին հինգ բաժանմունքների վրայ աւելացաւ և մէկը, չորրորդ բաժանմունքը, որով սոյն ուսումնական տարում դպրոցը ունեցաւ ընդամենը վեց բաժանմունք՝ Ա. հիմնական. Բ. հիմնական, Բ. զուգընթաց, Գ. հիմնական. Գ. զուգընթաց և Դ. հիմնական։

Ուսուցչական կազմը, որ բաղկացած էր վեց հոգուց, անփոփոխ մնացել էր նոյնը։ Այդ կազմից Աւագ ուսուցիչ Ս. Թարայեանն աւարտել է Ուսուցչական Սեմինարիա, Յ. ք. Խաչվանքեանը՝ Գէորգեան ճեմարանը, Յ. Այտմեանը՝ Գէորգեան ճեմարանը, Հ. Ամատունին՝ Ներսիսեան դպրոցը, իսկ Ա. Խանհալեանը և Յ. Տէր-Ղազարեանը՝ Քաղաքային դպրոց և ունին ուսուցչական ցենզ։

Ձգալի փոփոխութիւն մտաւ սոյն ուսումնական տարում հոգաբարձական կազմի մէջ։ Դեռ ա-

մառւայ արձակուրդների ամիսներում դպրոցիս նախկին հոգաբարձական կազմը բանիցս յղելով ու. ուսուցիչ Ս Թարայեանի զեկուցումը դպրոցական բնակարանի խոնաւութեան և ուրիշ անյարմարութիւնների մասին, որոշել էր դպրոցը տեղափոխել ուսուցիչ Հ. Տէր-Ղազարեանի տունը։ Այդ որոշման՝ սկզբում համաձայն չէր հոգաբարձուներից միայն մէկը, բայց պայմանը գրելու ժամանակ հրաժարւեցաւ ստորագրելուց և մի ուրիշ հոգաբարձու. այդպիսով հոգաբարձական կազմի մէջ ընկաւ տարաձայնութիւն, որին վերջ տւեց ծխական ժողովը։ Վերջինս (ծխական ժողովը) նախ արձակած համարեց հոգաբարձական կազմը և ապա 'ի նկատի առնելով՝ ա) որ դպրոցական վարչութիւնը պարտաւոր էր ըստ պայմանի մի տարի ևս մնալ հին շինութեան մէջ, բ) որ հին շինութիւնը մօտ է և կեդրոնին աւելի, քան Տէր-Ղազարեանի տունը, և գ) որ ծխականները մտադիր են մօտ ապագայում ունենալ սեփական դպրոցական շէնք, ուստի և մի տարւայ համար չարժէ դպրոցը տեղափոխել—որոշեց թողնել դպրոցը հին շինութեան մէջ և անմիջապէս ձեռնամուխ լինել սեփական շինութեան։ Նոյն ժողովում ընտրեցին թէ նոր հոգաբարձուներ և թէ դպրոցական շէնքի շինարար մասնաժողովի անդամներ։ Հին հոգաբարձական կազմից վեր-



ընտրեցին պ. պ. Ա. Սանոյեան և Կ. Ժամակոչեան.* իսկ նոր ընտրեցին պ. պ. Գ. Գեօզալեան, Մ. Յովհաննիսեան և Ս. Մաքինեան։ 1907—1908 ուսումնական տարում դպրոցիս վերոյիշեալ մանկավարժական կազմը սկսեց իւր գործունէութիւնը արդէն նոր հոգաբարձական կազմի հետ։ Թէև վերոյիշեալ տարաձայնութիւնը և կրօնուսոյց Յ. քհ. Խաչվանքեանի ուսումնական տարին սկսելուց յետոյ Ս. Փրկչի դըպրոց տեղափոխւելու մտադրութիւն ունենալը սպառնում էին վնաս հասցնել դպրոցի յառաջադիմութեանը, բայց շնորհիւ նորընտիր հոգաբարձութեան և մանկավարժական կազմի համերաշխ գործունէութեան, դպրոցս կարողացաւ իր ժամանակին չարիքի առաջն առնել և ուսուցման գործը տանել իր բնական ընթացքով։ Այսպիսի մի աղքատ դպրոց, ինչպիսին է Ս. Լուսաւորչի «Խրիմեան» դպրոցը, ոչ միայն կարողացաւ ուսումնական տարին անցկացնել խաղաղ, առանց մի որևէ միջնադէպի, այլ և ձեռնարկեց սեփական շինութիւն։ Շինարար մասնաժողովի, հոգաբարձուների և ուսուցիչների, նաև հասարակութեան միջից գիտակից և դպրոցին նւա-

---

* Գ. Կ. Ժամակոչեան տարւայ կիսին, իւր եամենայ հաշւետւութեան ժամանակ հրաժարւեց պաշտօնից. նորա տեղ բռնեց հոգաբարձական անձնափոխանորդ Տէր Մելիքսեդէկեանը։ Ծ. Թ.

նակութիւնը հասկացող մի քանի անձանց ջանքերով անցեալ նոյեմբերի 13-ին «Թարգմանչաց տօնի» օրը, կատարուեցաւ դպրոցական շէնքի հիմնադրութեան հանդէսը. իսկ մինչև ձիւնը գետին իջնելը արդէն հիմքը պատրաստ էր։

Ուսուցչական և հոգաբարձական կազմի որոշմամբ յայտարարուեց սեպտեմբերի մէկից ուսումն ըսկսած։ Մինչև ամսի 11-ը կանոնաւոր պարապմունքների փոխարէն կատարուեցաւ նոր աշակերտների ընդունելութիւնը և եղան մի շարք մանկավարժական ժողովներ։ Այդ ժողովների ընդհանուր նպատակն էր բոլոր առարկաների դասաւանդման եղանակների (մեթոդների) մէջ միօրինակութիւն մտցնել։ Բացի ընդհանուր գիտական-կրթական և մեթոդիքական օրէնքներից, որոնց մասին այդ ժողովներում խօսւում էր և մտքերի փոխանակութիւնից յետոյ ուսուցիչները գալիս էին նրանց ըմբռնողութեան տեսակէտից միանման հասկացողութեան, յիշեալ ժողովներում խօսւում էր և այն մասին, թէ այս կամ այն մեթոդը ինչ ձևով և որ հանգամանքներում և ինչ չափով պիտի կիրականացնել գործնականապէս մեր դպրոցներում, որպէսզի նա լինի նպատակայարմար և արդիւնաւէտ։ Ժողովների որոշումները արձանագրւում էին մանրամասն «Արձանագրութեան մատեանի» մէջ, որպէսզի ուսու-



ցիչները հարկ եղած րոպէին հնարաւորութիւն ունենան օգտուել այդ որոշումներից։

Նախապատրաստական մանկավարժական ժողովներում որոշուեցաւ նոյնպէս, թէ, իւրաքանչիւր բաժանմունքում ինչ առարկաներ են աւանդուելու և շաբաթական քանի դաս, թէ որ ուսուցիչը ինչ առարկայ է աւանդելու և ինչ ձեռնարկներով. որոշուեցաւ դասատուների թիւը, դասերի և դասամիջոցների տևողութիւնը, ուսման պիտոյքների հայթայթման ձևը. ընտրուեցան բաժանմունքների համար դասախօսներ և, այս վերջիններիս իրենց բաժանմունքի աշակերտներին ցուցակագրելուց և կանոնաւոր դասարանական ցուցակ կազմելուց յետոյ, սեպտեմբերի 11-ից դպրոցում սկսուեցան կանոնաւոր պարապմունքներ։

Տարւոյ սկզբում աշակերտները տեղաւորուած էին դպրոցի վեց բաժանմունքներում հետևեալ կերպով։ Ա. հ. բաժանմունքում 45 աշակերտ, Բ. հ. բաժանմունքում՝ 42, Բ. զուգ. բաժանմունքում՝ 43, Գ. հ. բաժանմունքում՝ 42, Գ. զուգ. բաժանմունքում՝ 37, և Դ. հ. բաժանմունքում՝ 29։

Այդ վեց բաժանմունքներում աւանդւում էր շաբաթական 141 դաս, որ բաժանուած էր ուսուցիչների վրայ հետևեալ աղիւսակի համեմատ։

| Անուն և ազգանուն դասատուների | Առարկաների անունը | Դասաբաշխութիւն՝ բաժանմունքների համեմատ | | | | | | Շաբաթական դասերի թիւը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ա. Հ. | Բ. Հ. | Բ. գ. | Գ. Հ. | Գ. գ. | Դ. Հ. | |
| Ս. Թարաղեան | 1) Թւաբանութիւն | » | » | » | » | » | 4 | 16 |
| | 2) Ռուս. լեզու | » | » | » | » | » | 6 | |
| | 3) Աշխարհագր. | » | » | » | 2 | 2 | 2 | |
| Հ. Ամատունի | 1) Հայոց լեզու | 7 | 6 | » | 6 | » | » | 25 |
| | 2) Հայ. պատմ. | » | » | » | 2 | 2 | 2 | |
| Հ. Աղամեան | 1) Երգ | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 25 |
| | 2) Հայոց լեզու | » | » | 6 | » | 6 | » | |
| | 3) Երկրա. ձեւագ. | » | » | » | 1 | » | » | |
| Ց. ք. Խաչվանքեան | 1) Կրօն | 3 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 25 |
| | 2) Բնակ. պատմ. | » | » | » | 2 | 2 | 2 | |
| | 3) Հայոց լեզու | » | » | » | » | » | 6 | |
| | 4) Երկրաչ. ձեւագ. | » | » | » | » | » | 1 | |
| Ց. Տէր-Ղազարեան | 1) Ռուսաց լեզու | » | 4 | » | 6 | » | » | 25 |
| | 2) Թւաբանութ. | » | 4 | » | 4 | » | » | |
| | 3) Նկարչութիւն | 2 | 2 | 2 | 1 | » | » | |
| Ա. Իսահակեան | 1) Ռուսաց լեզու | » | » | 4 | » | 6 | » | 25 |
| | 2) Թւաբանութ. | 4 | » | 4 | » | 4 | » | |
| | 3) Նկարչութիւն | » | » | » | » | 1 | 1 | |
| | 4) Երկրաչ. ձեւագ | » | » | » | » | 1 | » | |
| | Ընդամենը | 17 | 20 | 20 | 28 | 28 | 28 | 141 |



Տարւայ մէջ ուսուցիչների կողմից եղել են հետեւեալ բացակայութիւնները։ Ս. Թարաղեանը բացակայել է վեց դաս, Հ. Ղազարեանը—63, Հ. Ամատունին—103, Ց. Աղամեանը—21, Ց. քհ. Խաչվանքեանը—52, Ա. Իսահակեանը—18 դաս. Իսկ եթէ 'ի նկատի առնենք այն հանգամանքը, որ ուսուցիչներից որեւիցէ մէկի բացակայութեան դէպքում պարապել են միւս ընկեր ուսուցիչները կամ բաժանմունքները միացնելով կամ իրանց ազատ ժամերը նուիրելով, այն ժամանակ զուտ բացակայութիւն կստանանք՝ Հ. Ամատունին—95, Ց. քհ. Խաչվանքեանը—34, Ց. Աղամեան—9, Ց. Տէր-Ղազարեանը—48, և Ա. Իսահակեանը—8 դաս։ Ս. Թարաղեանը աւելի պարապել է 25 դաս։

Չնայած որ ուսումնական տարին անցաւ համեմատաբար աւելի խաղաղ և ազատ քաղաքումս սովորական երեխայական տարափոխիկ հիւանդութիւններից, այնուամենայնիւ աշակերտներից 16 հոգի ստիպւած եղան թողնել դպրոցը տարւայ կիսին, մի քանիսը չքաւորութեան, մի քանիսն էլ ընտանեկան զանազան կողմնակի պատճառներով, այնպէս որ տարւայ սկզբի 238 աշակերտներից վերջումը մնացել էին 222 աշակերտ, որոնք տեղաւորւած էին բաժանմունքներում հետեւեալ կերպով։ Ա. Հ. բաժանմունքում-43. Բ. Հ. բաժանմունքում—41,

Բ. դաս. բաժանմունքում—40, Գ. Հ. բաժանմուն-
քում—40, Գ. դաս. բաժանմունքում—30, և Գ. Հ.
բաժանմունքում—27։

Տարւայ մէջ դպրոցը ունեցել է երկու աշա-
կերտական հանդէս, որտեղ կարդացել են յարմա-
րաւոր գրուածներ, արտասանել ոտանաւորներ և
երգել խմբովին երգեր—և երեք աշակերտական
գրօսանք։

Դպրոցի մանկավարժական կազմի և հոգա-
բարձութեան գործունէութեան սահմանի մէջ են
մտնում և մանկավարժական, մանկավարժական—հո-
գաբարձական ժողովները՝ թւով 30։ Այդ ժողովներում
քննութեան են առնել մանկավարժական և դպրո-
ցի վերաբերեալ առօրեայ հարցեր։ Քարտուղա-
րութիւնը ձրիաբար վարել են ուսուցիչները, բացի
Ա. Իսահակեանից, և հոգաբարձու Ա. Սանոյեանը՝
հերթով։ Ա. Իսահակեանը հրաժարուելով հերթական
քարտուղարութիւնից ձրի վարում էր գրագրա-
նոցային պաշտօն։ Մանկավարժական ժողովներում
քննուած և որոշուած հարցերը ըստ կարելւոյն իրա-
կանացել են գործնականում։

Տարւայ մէջ դպրոցը ունեցել է և երեք ծնո-
ղական ժողով։ Այդ ժողովներից առաջին երկուսի
ընդհանուր նպատակն է եղել դպրոցի և ծնողների
մէջ սերտ կապ հաստատել։ Այդ տեսակէտից դըպ-



րոցի մանկավարժական կազմը նպատակայարմար
է գտել յիշեալ երկու ժողովներում խօսել ծնողնե-
րի հետ հետեւեալ հարցերի շուրջը։

1 Հրաւիրել ծնողների ուշադրութիւնը աշա-
կերտների առաջին դասից ուշանալու երեւոյթի վը-
րայ. առաջարկել, որ գոնէ առաւօտները երեխա-
ներին չզբաղեցնեն անտեղի գործերով։

2 Շեշտել ընդհանրապէս մաքրութեան անհրա-
ժեշտութիւնը. հասկացնել, որ պարտաճանաչ ծնողը
չպիտի իր երեխային կեղտոտ, պատառոտուած շո-
րերով և առանց թաշկինակի դպրոց ուղարկէ։

3 Ծանօթացնել ծնողներին դպրոցում ըն-
դունուած մի քանի ուղղիչ միջոցների հետ, որոն-
ք են՝ նկատողութիւն առանձնապէս, նկատողու-
թիւն դասարանում ընկերների ներկայութեամբ, նը-
կատողութիւն բոլոր աշակերտների ներկայութեամբ
և վերջապէս ազդել ծնողի միջոցով։

4 Յիշեցնել, որ իւրաքանչիւր ծնող պարտա-
կան է իր ազատ ժամերին այցելել դպրոց և լսել
ուսուցիչների դասերը։

Եւ 5 նկատել, որ դասերից յետոյ երեխանե-
րին ուրիշի մօտ չպիտի տալ պարապելու.

Առաջին երկու նախապատրաստական ժողով-
ներից յետոյ, մանկավարժական կազմը, գիտակցե-
լով ծնողական ժողովների վեհ նշանակութիւնը,

որպէսզի կանոնաւորել և սիստեմատիկ բնաւորութիւն տալ այդ ժողովներին. բայց դժբաղդաբար այստեղ արդէն ծնողները ցոյց տուին իրանց անտարբերութիւնը և անհետաքրքրութիւնը դպրոցական գործերով: Այնուհետև դպրոցը հազիւ կարողացաւ մի անգամ ևս ծնողական ժողով ունենալ և խօսել «երեխայի բնական շարժումները և նրան կաշկանդելու վնասակարութիւնը» թեմայի շուրջը:

Սոյն ուսումնական տարում, անցեալ տարւայ նման, դպրոցը մանկավարժական կողմը ժխտեց թէ թւանշաններով աշակերտների յառաջադիմութեան չափը որոշելու սկզբունքը և թէ քննութիւնները, գտնելով այդպիսիները մանկավարժական և առողջապահական տեսակէտից միանգամայն վնասակար: Դորա փոխարէն ժողովներում լսելով դասատուների կարծիքը աշակերտների յառաջադիմութեան մասին և քննութեան առնելով վերջիններիս գրաւոր աշխատութիւնները, մանկավարժական ժողովը որոշեց բաժանել աշակերտներին երկու կատեգորիաների յառաջադէմ և թոյլ: Սկզբունքով ընդունելով հանդերձ բոլոր աշակերտներին հետեւեալ բաժանմունքը փոխադրութեան խնդիրը անհրաժեշտ, որոշւեց թողնել նոյն բաժանմունքներում բոլոր այն աշակերտներին, որոնք «թոյլ» կատեգորիային էին պատկանում—այսինքն այնպիսիներին, որոնք տար-



ւայ մէջ ունեցել են զգալի բացակայութիւններ, կամ գտնւել են բացառիկ պայմանների մէջ և կամ վերջապէս, որոնք ֆիզիքապէս և մտաւորապէս չէին համապատասխանում հետեւեալ բաժանմունքին:

Այդպիսով, մանկավարժական ժողովի խորհրդակցութեան արդիւնքը եղաւ հետեւեալ որոշումը աշակերտների փոխադրութեան վերաբերմամբ:

Ա, հ. բաժանմունքից փոխադրւեցին
Բ. բաժանմունք . . . 34 հոգի
Մնացին նոյն բաժանմունքը . 9 »
Բ. հ. բաժանմունքից փոխադրւեցին
Գ. բաժանմունք . . . 33 »
Մնացին նոյն բաժանմունքը. 8 »
Բ. զ. բաժանմունքից փոխադրւեցին
Գ. բաժանմունք : . . 30 »
Մնացին նոյն բաժանմունքը. 10 »
Գ. հ. բաժանմունքից փոխադրւեցին
Դ. բաժանմունք . : , 32 »
Մնացին նոյն բաժանմունքը. 9 »
Գ. զ. բաժանմունքից փոխադրւեցին
Դ. բաժանմունք . . . 18 »
Մնացին նոյն բաժանմունքը. 12 »
Դ. բաժանմունքից փոխադրւեցին
Ե, բաժանմունք . , . 27 հոգի:

Աշակերտների կողմից ուսումնական տարւայ

ընթացքում ընդամենը բաց է թողնուած 12,423 դաս, այնպէս, որ եթէ հաշուելու լինենք, միջին թւով իւրաքանչիւր աշակերտի վրայ գալիս է 56 դաս: Այդ բացակայութիւնների մի մասը եղել է հիւանդութեան, մի մասը թոշակների, իսկ մի զգալի մասն էլ ծնողների անտարբերութեան պատճառով:

Ծնողներից շատերը դեռ ծանօթ չեն դպրոցի բոլոր պահանջների հետ. պատճառ, որ մինչև օրս ոտները դպրոցի շէմքից ներս չեն դրել: Նրանցից մի քանիսը մինչև անգամ ենթադրում են, որ երեխան երբ էլ դպրոց գայ, ուսուցիչը նրա հետ կը պարապի: Աշակերտները յաճախ առաջին դասից ուշանում են յատկապէս այն պատճառով, որ ծնողները նոցա զբաղեցնում են մի որևէ տնային գործով, ինչպէսիք են՝ կաթ ծախելը, ջուր բերելը, խանութ գնալը և այլն—և ապա նոր ուղարկում են դպրոց:

Աշակերտների զգալի թւով բացակայութիւնները մասամբ կարելի է բացատրել և նրանց ծնողների չքաւորութեամբ: Մեր աշակերտների ծնողներից շատ քչերը գտնւում են տնտեսապէս մի բիչ բարւօք վիճակի մէջ. մնացած մեծ մասը, եթէ ոչ ծայրայեղ չքաւորներ (թէև պակաս չեն և այդպիսիները), գոնէ իրանց օրական ապրուստը հազիւ են հայթայթում: Այդպիսով, եթէ ըստ իրանց կա-



ցութեան նոցա բաժանենք «լաւ ապրուստ ունեցող», «բաւարար ապրուստ ունեցող» և «չքաւոր» երեք կատեգորեաների, կստանանք հետևեալ պատկերը:

Լաւ ապրուստ ունեն . . . . 67 ծն.
Բաւարար ապրուստ ունեն . . 64 ծն.
Չքաւոր են . . . . . . . 91 ծն.

Ըստ իրանց պարապմունքի աշակերտների ծնողները բաժանւում են հինգ դասի:

ա. Հողագործներ . . . . . . . 18
բ. Արհեստաւորներ . . . . . . 86
գ. Առևտրականներ. . . . . . 30
դ. Բանւորներ . . . . . . . 62
ե. Ծառայողներ . . . . . . . 26

Դպրոցիս հոգաբարձութիւնը և մանկավարժական կազմը, գիտակցելով աշակերտների տնտեսական աննախանձելի վիճակը, մինչև 40 տոկոսը ազատեց ուսման վարձից, իսկ մնացածներին, նախապէս ծանօթանալով նոցա տնտեսական պայմաններին, ուսման վարձ նշանակեց իւրաքանչիւրին ըստ իւր կարողութեան 2-ից մինչև 12 ռուբլի: Իսկ թէ ինչ ձևով կանդրադառնար այդպիսի վերաբերմունքը դպրոցիս նիւթականի վրայ, այդ ցոյց է տալիս հետևեալ հաշիւը:

Բացի աշակերտներից ստացուած ուսման վար-

ձից, որ հասնում էր մինչև 800 րուբլու, դպրոցիս 1907—08 ուսումնական տարւայ միւս եկամուտները են՝ Հոգևոր կառավարութիւնից ստացւած պըսակներից արդիւնք—200 ր., ս. Աստւածածնի արդիւնքի $^{2}/_{3}$ մասը 3400 ր., պատւաւոր հոգաբարձուներից անդամավճար—420 ր.։ Ընդամենը 4820 ր.։ Իսկ ծախք եղել է։

Աւագ ուսուցչութեան վարձ—470 ր., դասատուներին 141 դասի գին—30 րուբլով դասը—4230 ր., երկու ծառաներին ամսական 15-ական րուբլի—360 ր., դպրոցական բնակարանի վարձ—600 ր., վառելիքի և լուսաւորութեան ծախք-230 ր., դպրոցական կարևոր պիտոյքների և տնտեսական ծախք—220 ր., նպաստ չքաւոր աշակերտներին—60 ր.։ Ընդամենը 6170 րուբլի։ Որից խօսքով դէֆիցիտ մնում է 1350 րուբլի։

Սոյն ուսումնական տարում խնամք է տարւած և դպրոցիս աշակերտական գրադարանի վերայ։ Արդէն եղած գրքերից ընտրւած են արժէքաւորները, կազմել են տւած և համարի տակ դնելով ցուցակագրւած. նաև գնումն է արւած մի քանի տեղ յարմարաւոր գրքոյկների համար։ Մի խօսքով, եկող տարւանից քիչ թէ շատ կանոնաւոր աշակերտական գրադարան ունենալու բոլոր նախապատրաստութիւնները տեսնւած են։



Դպրոցս չի զլացել իւր սուղ միջոցներից մի բան յատկացնել և դպրոցական անհրաժեշտ պիտոյքների համար։ Այսպէս, սոյն ուսումնական տարում ձեռք են բերւած աշխարհագրական քարտէզներ, գլոբուս, երկրաչափական մարմիններ, դասարանական համրիչ և այլն։

Դպրոցիս գոյութիւնը ապահովելու համար թէ հոգաբարձութիւնը և թէ մանկավարժական կազմը միշտ այն կարծիքին են եղել, որ նախ պէտք է տեղիս ծխական չորս դպրոցների կասսան միացնել և միացեալ ուժով ընդհանուր դէֆիցիտը ծածկել։ Ամբողջ երեք տարի այդ ցանկութիւնը մնացել էր լոկ ցանկութիւն։ Բայց բարեբաղդաբար եռամեայ փորձը ցոյց տւեց, որ միայն միութեամբ հնարաւոր կլինի դպրոցական գործը առաջ տանել։ Եւ ահա վերջապէս ներկայ ուսումնական տարւայ վերջում տեսնում ենք չորս դպրոցների կասսաները միացած և նորա շուրջը միացեալ գործունէութիւն հաստատւած։ Այդ միութիւնը անկասկած դպրոցների ներքին կեանքի մէջ կմտցնի մի շարք բարեփոխութիւններ, որոնցից առ այժմ ամենակարևոր կարելի է համարել հետևեալները.

1. Դպրոցների նախահաշիւները ծխական ժողովներին կներկայացւին 'ի քննութիւն, ոչ թէ ուսումնական տարւայ կիսին, կամ վերջերին, ինչպէս այդ լինում էր մինչև այժմ, այլ իւրաքանչիւր տարւայ վերջին կներկայացւին յաջորդ ուսումնական տարւայ նախահաշիւները, որպէսզի ժողովում հնարաւորութիւն լինի ցանկալի փոփոխութիւնները մտցնել։

2 Դպրոցների նախահաշիւները կ՚կազմեն ոչ թէ առանձին հոգաբարձութիւնները, այլ ընդհ. հոգաբարձութիւնը, որով ընդ միշտ կվերանայ՝ նախ ծախսերի այն զգալի տարբերութիւնը, որ իւրաքանչիւր դպրոց մտցնում է իր նախահաշւի մէջ, երկրորդ՝ կստեղծւի միօրինակութիւն և երրորդ՝ հնարաւորութիւն կլինի անտեսելու նաև մի փոքրիկ գումար դէֆիցիտի մի մասը ծածկելու համար։

3 Միութեամբ մասամբ կվերանայ և այն տգեղ սովորութիւնը, որ տարին մի քանի անգամ իւրաքանչիւր դպրոց ստիպւած էր լինում իր ներկայացուցիչների միջոցով դիմել քաղաքացիներից միշտ միևնոյն անձնաւորութիւններին նպաստ խնդրելու, որով վերջիններիս դնում էր անել դրութեան մէջ։ Այսուհետև հնարաւորութիւն կլինի միանգամից որոշելու դէֆիցիտի քանակը և որոնելու նորան ծածկելու միջոցներ։

4 Միացեալ հոգաբարձութիւնը հնարաւորութիւն ունենալով նախատեսել դէֆիցիտը տարւայ ըսկզբից, հենց նոյն ժամանակից էլ անշուշտ կաշխատէ միջոցներ ձեռք առնել նորան ծածկելու համար և ոչ թէ կսպասէ մինչև ուսումնական տարին վերջանալը։

Այս բոլորից յետոյ Ս. Լուսաւորչի «Խրիմեան» դպրոցի վարչութեանը մնում է միայն ցանկալ, որ միացեալ հոգաբարձութեան բոլոր որոշումները չը մնան լոկ որոշումներ, այլ իրականանան կեանքի մէջ։

Ս. Լուսաւորչի «Խրիմեան»
դպրոցի վարչութիւն

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL014897